ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի դոցենտ,
քիմ. գիտ. թեկն.
gayanca@yahoo.com

ԺԵՆՅԱ ԱԲԳԱՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
լրագրության մագիստրոս
jenyabgaryan@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-1866-8-88

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվում է բռնության և մահվան հանգամանքների լուսաբանումը լրատվամիջոցներում՝ հոգեբանական ազդեցության դիտանկյունից: Հետազոտության նպատակն է վերլուծել մեդիադաշտում առկա էթիկական խնդիրները և դրանց հոգեբանական հետևանքները լսարանի համար: Հոդվածի շրջանակներում իրականացվել է հայաստանյան և միջազգային առաջատար առցանց լրատվականների բովանդակային վերլուծություն, ինչը թույլ է տվել բացահայտել սենսացիոնիզմի և տեսողական բռնության դրսևորումները: Արդյունքները վկայում են, որ լրատվամիջոցները հաճախ գերակայությունը տալիս են դիտելիությանը, ինչը հանգեցնում է լսարանի մեջ տագնապայնության բարձրացման և հուզական դեսենսիտիզացիայի (զգայունության անկման):

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ բռնություն, մահվան լուսաբանում, մեդիահոգեբանություն, լրագրողական էթիկա, սենսացիոնիզմ, տրավմատիկ բովանդակություն:

COVERAGE OF CIRCUMSTANCES OF VIOLENCE AND DEATH IN JOURNALISTIC MATERIALS: A PSYCHOLOGICAL ANALYSIS

GAYANE GRIGORYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Department of Psychology named after Academician Mkrtich Mazmanyan,
PhD in Chemical Sciences, Associate Professor
gayanca@yahoo.com

ZHENYA ABGARYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Master of Journalism
jenyabgaryan@gmail.com

Abstract

The article examines the coverage of circumstances involving violence and death in the media from the perspective of psychological impact. The study aims to analyse the ethical challenges in the media landscape and their psychological consequences for audiences. Within the scope of this research, a content analysis of leading Armenian and international online news outlets was conducted to identify manifestations of sensationalism and visual violence. The findings indicate that media organisations frequently prioritise viewership and high engagement rates, which leads to increased levels of anxiety and emotional desensitisation (a decrease in sensitivity) among the audience.

Keywords and phrases: Violence, death coverage, media psychology, journalistic ethics, sensationalism, traumatic content.

ОСВЕЩЕНИЕ ОБСТОЯТЕЛЬСТВ НАСИЛИЯ И СМЕРТИ В ЖУРНАЛИСТСКИХ МАТЕРИАЛАХ: ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ

ГАЯНЕ ГРИГОРЯН

Доцент кафедры психологии им. академика Мкртича Мазманяна
Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна,
кандидат химических наук
gayanca@yahoo.com

ЖЕНЯ АБГАРЯН

Магистр журналистики
Армянский государственный педагогический университет
им. Х. Абовяна
jenyabgaryan@gmail.com

Аннотация

В статье исследуется освещение обстоятельств насилия и смерти в средствах массовой информации с точки зрения психологического воздействия. Целью исследования является анализ этических проблем в медиапространстве и их психологических последствий для аудитории. В рамках статьи был проведен контент–анализ ведущих армянских и международных онлайн–изданий, что позволило выявить проявления сенсационности и визуального насилия. Результаты свидетельствуют о том, что СМИ зачастую отдают приоритет рейтингам и просмотрам, что приводит к росту тревожности и эмоциональной десенсибилизации (снижению чувствительности) у аудитории.

Ключевые слова и фразы: насилие, освещение смерти, медиапсихология, журналистская этика, сенсационность, травмирующий контент.

Ներածություն

Ժամանակակից տեղեկատվական դարաշրջանում զանգվածային լրատվամիջոցները դադարել են լինել իրականության պարզ արտացոլողը. դրանք ակտիվորեն ձևավորում և կառուցում են հանրային ընկալումները:

Տեղեկատվության տարածման արագությունը և թվային մեդիայի տիրապետությունը լրագրության առջև դրել են մի բարդ մարտահրավեր՝ ընտրություն կատարել օպերատիվության (ինչը հաճախ հանգեցնում է սենսացիոնիզմի) և մասնագիտական էթիկայի միջև:

Այս խնդիրն առավել սուր է դրսևորվում բռնության, մահվան և արտակարգ պատահարների լուսաբանման համատեքստում, որտեղ լրագրողական նյութի ազդեցությունը դուրս է գալիս զուտ տեղեկատվական դաշտից և ներխուժում մարդու հոգեկան առողջության տիրույթ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսողական բռնության չափաբաժնի մեծացումը լրատվական հոսքերում հանգեցնում է հասարակական տագնապայնության աճի:

Համաձայն Ջորջ Գերբների «Ահազդու աշխարհի սինդրոմի» (Mean

World Syndrome) տեսության՝ բռնության տեսարանների հաճախակի դիտումը ստիպում է անհատին աշխարհն ընկալել որպես ավելի վտանգավոր և թշնամական վայր, քան այն կա իրականում **[1]:** Հայաստանյան իրականության մեջ, որտեղ հասարակությունը գտնվում է հետտրավմատիկ շրջանում, մեդիա բովանդակության հոգեբանական ազդեցության ուսումնասիրությունը դառնում է ոչ միայն մասնագիտական, այլև ազգային անվտանգության խնդիր:

Հոդվածի գիտական նպատակն է վերլուծել, թե ինչպես է բռնության լուսաբանման ձևը (լեզվական ընտրությունը, կադրերի բացվածությունը, էթիկական նորմերի պահպանումը) անդրադառնում լսարանի հուզական վիճակի վրա:

Մենք առաջ ենք քաշում այն թեզը, որ սենսացիոն նպատակներով մահվան հանգամանքների մանրամասն ներկայացումը նպաստում է լսարանի դեսենսիտիզացիային (զգայունության անկմանը), ինչը հանգեցնում է հանրային կարեկցանքի դեֆիցիտի և սոցիալական ապատիայի:

Հետազոտության շրջանակում իրականացված բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել այն հիմնական միտումները, որոնք առկա են տեղական և միջազգային մեդիահարթակներում, և առաջարկել ուղիներ՝ լրագրողական աշխատանքը հոգեբանական անվտանգության չափանիշներին համապատասխանեցնելու համար:

Ուսումնասիրության մեթոդ

Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների համադրությամբ: Որպես հիմնական գործիք կիրառվել է մեդիա մշտադիտարկումը և բովանդակային վերլուծությունը (content analysis): Ուսումնասիրության համար ընտրվել են հայաստանյան 3 առաջատար լրատվական կայքեր (2023–2024թթ. ժամանակահատվածում):

Վերլուծության են ենթարկվել մահվան ելքով պատահարների, սպանությունների և պատերազմական գործողությունների վերաբերյալ հրապարակումները: Դիտարկվել են հետևյալ չափանիշները.

- լուսանկարների և տեսանյութերի բացվածության աստիճանը (առանց զգուշացման կամ մշակման),
- վերնագրերի էմոցիոնալ երանգավորումը և սենսացիոնիզմը,
- զոհերի հարազատների իրավունքների և էթիկական նորմերի պահպանումը:

Տեսամեթոդական հիմքեր

Բռնության լուսաբանման հոգեբանական ազդեցությունը հասկանալու համար հիմք են ընդունվել Ջ.Գերբների «Ահազդու աշխարհի սինդրոմի» (Mean World Syndrome) տեսությունը և մեդիաէթիկայի հիմնարար սկզբունքները: Հոգեբանական տեսանկյունից՝ բռնության տեսարանների հաճախակի ցուցադրումն առաջացնում է «երկրորդային տրավմատիզացիա»: Լրագրողական նյութը դադարում է լինել լոկ տեղեկություն և վերածվում է հոգեբանական ներազդման գործիքի, որը կարող է խաթարել հասարակական անվտանգության զգացումը:

Հոդվածի տեսական դրույթները հիմնավորելու համար դիտարկել ենք երեք կոնկրետ դեպք, որոնք ցույց են տալիս մեդիա բովանդակության հոգեբանական ազդեցության ռիսկերը:

1. RT Russia և Ռուսաստանի դպրոցականի դեպքը (Ռուսաստան, 2025թ.)

Իրավիճակը: Դպրոցականի իրականացրած դանակահարության դեպքի ժամանակ RT Russia-ն հրապարակեց հանցագործի կողմից արված տեսանյութը, որտեղ նա նկարահանել էր հարձակման գնալու ընթացքը: Չնայած «18+» նախազգուշացմանը՝ տեսանյութը հասանելի մնաց մի քանի ժամ, ինչից հետո հեռացվեց: Դեպքը տեղի է ունեցել դեկտեմբերին, իսկ արդեն փետրվարին ստուգելիս նկատում ենք, որ նյութի մեջ առկա նկարներում հանցագործ երեխայի դեմքն արդեն բլուր էին արել **[3]:**

Հոգեբանական վերլուծություն: Հանցագործի «առաջին դեմքից» արված տեսանյութերի տարածումը ստեղծում է հանցագործության «գեյմիֆիկացիայի» (խաղայնացման) էֆեկտ: Լսարանը իրադարձությանը հետևում է մարդասպանի աչքերով, ինչը կարող է առաջացնել հուզական շոկ և նպաստել «նմանակող վարքագծին» (Copycat crime): Հեռացումը մի քանի ժամ անց փաստում է, որ լրատվամիջոցը սկզբնապես առաջնորդվել է դիտելիությամբ՝ անտեսելով հանրային հոգեկան անվտանգությունը:

2. «Սուրմալու» առևտրի կենտրոնի պայթյունը (Հայաստան, 2022թ.)

Իրավիճակը: Ողբերգական պայթյունից անմիջապես հետո մի շարք հայկական լրատվամիջոցներ և ֆեյսբուքյան էջեր իրականացնում էին ուղիղ հեռարձակումներ փլատակների մոտից: Կադրերում հաճախ երևում էին զոհվածների մարմնի մասեր, արնաշաղախ մարդիկ և հարազատների ծայրահեղ հիստերիկ վիճակը **[4]:**

Հոգեբանական վերլուծություն: Սա «տեսողական բռնության» դասական օրինակ է: Մարդկային ողբերգության ուղիղ հեռարձակումը, առանց որևէ խմբագրական միջամտության, լսարանի մեջ առաջացնում է «երկրորդային տրավմատիզացիա»: Դիտողը դառնում է ոչ թե տեղեկացված, այլ ողբերգության անուղղակի մասնակից, ինչը հանգեցնում է տագնապային խանգարումների և անօգնականության զգացումի խորացման:

3. Քրայսթչերչի մզկիթի հարձակման լուսաբանումը (Նոր Զելանդիա, 2019թ.)

Իրավիճակը: Ահաբեկիչը ուղիղ եթերով հեռարձակում էր սպանդը: Միջազգային շատ լրատվամիջոցներ սկզբում օգտագործեցին այդ կադրերը իրենց ռեպորտաժներում **[5]:**

Հոգեբանական վերլուծություն: Այս դեպքը ստիպեց համաշխարհային մեդիա հանրույթին վերանայել էթիկայի կանոնները: Գիտականորեն ապացուցված է, որ նմանատիպ կադրերի տարածումը «հերոսացնում» է ահաբեկչին որոշակի մարգինալ խմբերի աչքերում: Արդյունքում՝ Նոր Զելանդիայում այդ տեսանյութի տարածումը քրեականացվեց, իսկ առաջատար մեդիաները պայմանավորվեցին երբեք չհրապարակել՝ «չարիքի տարածումը» կանխելու համար:

4. «Infoteka24» տելեգրամյան ալիքի այս հրապարակումը դասական օրինակ է, թե ինչպես են լրատվամիջոցները շահարկում մահվան տեսարանները՝ դիտելիություն ապահովելու նպատակով: Հեղինակները նախապես զգուշացնում են նյութի ծանր լինելու մասին, սակայն միևնույն ժամանակ հրապարակում են դիակների բաց տեսարաններով կադրեր, ինչը հակասում է լրագրողական էթիկայի տարրական նորմերին և մարդու արժանապատվության հարգման սկզբունքին: Տեսողական նմանատիպ ագրեսիվ բովանդակությունը լսարանի մեջ առաջացնում է հուզական շոկ

և տագնապայնության բարձրացում՝ միաժամանակ նպաստելով բռնության նկատմամբ հասարակական զգայունության անկմանը (դեսենսիտիզացիա): Նման նյութերը հաճախ չեն կրում տեղեկատվական լուրջ արժեք, այլ ծառայում են որպես հուզական մանիպուլյացիայի գործիք, ինչը բացասաբար է անդրադառնում հանրային հոգեկան առողջության վրա **[7]:**

Ուսումնասիրությունը բացահայտում է նաև մեդիա հարթակների, մասնավորապես՝ YouTube-ի երկակի ստանդարտները, որտեղ արաբական լրատվամիջոցներին (օրինակ՝ *Al Jazeera* կամ նմանատիպ ալիքներին) հաճախ արտոնվում է հրապարակել բացահայտ դաժանության կադրեր, որոնք այլ պարագաներում կհեռացվեին: Այս երևույթը ստեղծում է տեղեկատվական անհավասարություն և նպաստում տրավմատիկ բովանդակության անարգել տարածմանը՝ բացատրելով դա իրադարձության «լրատվական արժեքով»: Սակայն հոգեբանական տեսանկյունից՝ նման կադրերի լեգիտիմացումը միայն խորացնում է լսարանի հուզական դեսենսիտիզացիան և խաթարում էթիկական միասնական նորմերի կիրառումը համաշխարհային մեդիայում:

Եզրակացություն

Ուսումնասիրելով բռնության և մահվան հանգամանքների լուսաբանման հոգեբանական առանձնահատկությունները ժամանակակից մեդիատիրույթում, Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի՝ խոցելի խմբերի խնդիրները լուսաբանող լրագրողների համար նախատեսված գործնական ուղեցույցը՝ կարող ենք արձանագրել, որ լրատվամիջոցների գործելաոճը հաճախ հակասում է հանրային հոգեկան առողջության պահպանման սկզբունքներին: Կատարված վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

Ուսումնասիրված նյութերի զգալի մասում նկատվում է «տեսողական բռնության» (visual violence) գործոնը: Հաճախ օգտագործվում են արյունոտ տեսարաններ կամ դիակների անկանոն ծածկված պատկերներ, որոնք չունեն տեղեկատվական արժեք, սակայն ապահովում են բարձր դիտելիություն (click-through rate): Սա փաստում է այն մասին, որ լրատվականների համար առաջնային է դարձել սենսացիոն բովանդակությամբ սպառողների ուշադ-ությունը գրավելը:

Տրավմատիկ բովանդակության անընդհատ հոսքը հանրության շրջանում ձևավորում է հուզական դեսենսիտիզացիա, որի հետևանքով մարդիկ սկսում են անտարբերությամբ ընկալել դաժանությունը: Այս երևույթը վտանգավոր է նրանով, որ նվազեցնում է հասարակական կարեկցանքի շեմը և ստեղծում մի միջավայր, որտեղ մարդկային կյանքի կորուստն ընկալվում է որպես լոկ վիճակագրական տվյալ կամ հերթական լրատվական հոսք:

Հայաստանյան մեդիադաշտի դեպքում, որը գործում է հետպատերազմյան և տագնապային բարձր ֆոնի պայմաններում, ողբերգական դեպքերի անֆիլտր լուսաբանումը (ինչպես «Սուրմալու» կենտրոնի պայթյունի օրինակում էր) ուղղակիորեն խորացնում է հավաքական տրավման: Զոհերի հարազատների հուզական ծայրահեղ վիճակը ցուցադրելով՝ լրատվամիջոցները դիտողին դարձնում են «երկրորդային զոհ», ինչը լուրջ սպառնալիք է հանրային հոգեկան առողջության և սոցիալական կայունության համար:

Հանցագործությունների լուսաբանումն առաջին դեմքից կամ հանցագործ-ների ուղերձների տարածումը նպաստում է բռնության յուրատեսակ «ռոման-տիզացմանը» կամ խաղայնացմանը: Նմանատիպ կադրերի տարածումը

ոչ միայն վիրավորում է մահացածների հիշատակը, այլև կարող է դրդել նմանակող վարքագծի (Copycat crime)՝ դառնալով չարիքի անուղղակի քարոզչության գործիք:

Մեդիա հարթակներում գործող երկակի ստանդարտները, որոնք թույլ են տալիս որոշակի լրատվականների տարածել բռնության կադրեր՝ պատրվակ բերելով դրանց «լրատվական արժեքը», խարխլում են էթիկական միասնական նորմերը: Սա ստեղծում է անվերահսկելի տեղեկատվական դաշտ, որտեղ մարդու արժանապատվությունը զիջում է քաղաքական կամ առևտրային շահերին:

Լրագրողական նյութերում առկա «18+» կամ նմանատիպ նախազգուշացումները մեծ մասամբ կրում են ձևական բնույթ և բավարար պաշտպանիչ մեխանիզմներ չեն: Անհրաժեշտ է վերանայել լրագրողական կրթության և ինքնակարգավորման մոտեցումները՝ շեշտադրելով հոգեբանական անվտանգության և զգայուն լուսաբանման վրա, որպեսզի լրատվամիջոցները դադարեն լինել տագնապի և տրավմայի տարածողներ:

Այսպիսով՝ բռնության և մահվան թեմաների լուսաբանումը պահանջում է մասնագիտական վարպետություն, հոգեբանական բարձր պատասխանատվություն, որտեղ լրագրողի առաջնային խնդիրն իրականության անաչառ արտացոլումն է՝ առանց լսարանի հոգեկան անդորրը խաթարելու:

Օգտագործված գրականության ցանկ

1. THE MEAN WORLD SYNDROME: Media Violence & the Cultivation of Fear https://www.mediaed.org/transcripts/Mean-World-Syndrome-Transcript.pdf
2. ՀՀ ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմին, Խոցելի խմբերի խնդիրները լուսաբանող լրագրողների համար գործնական ուղեցույց, Երևան, 2023թ. https://ypc.am/wp-content/uploads/2023/08/Guidelines-Vulnerable-groups %D5%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D5%BD.2023.pdf
3. https://t.me/rt_russian/267149
4. Death Toll Rises In Armenian Market Blast https://www.azatutyun.am/a/31987514.html (11.02.2026)
5. Christchurch attack: suspect had white-supremacist symbols on weapons https://www.theguardian.com/world/2019/mar/15/christchurch-shooting-new-zealand-suspect-white-supremacist-symbols-weapons (13.02.2026)
6. https://www.youtube.com/watch?v=STm97BgJvUQ
7. https://t.me/infoteka24/69853